

ԵՈՒՆԻՖԻԼ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԵՑՈՒԱԾՔԻ ՓԱՓԿԵՑՈՒՄ

Հարաւի մէջ գործող ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերուն նկատմամբ ոտնձգութիւններու շարքին մէջ, Սուր գաւառի Մանսուրի բնակավայրէն խումբ մը երիտասարդներ ճամբան փակեցին ԵՈՒՆԻՖԻԼ-ի ինքնաշարժներուն առջեւ, որոնք շրջուն ջոկատով կը շրջագայէին նշեալ շրջանին մէջ եւ մուտք գործած էին գիւղը, առանց համակարգելու լիբանանեան բանակին հետ:

Լիբանանեան զանազան շրջաններու մէջ ԵՈՒՆԻՖԻԼ-ի խաղաղապահ ուժերուն խոչընդոտումէն եւ միջազգային ուժերուն դէմ գործուած բռնութիւններէն ետք, երէկ բարձրացան քաղաքական եւ կրօնական կոչեր՝ իրավիճակը հանդարտեցնելու եւ խաղաղապահներուն ներկայութիւնը պահպանելու պատգամով:

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի գլխաւորեց խաղաղապահ ուժերու առաքելութեան զօրակցողները եւ հաւաստիացուց, որ հարաւի բնակչութիւնը առաւելագոյնս հետաքրքրուած է իրենց գիւղերուն մէջ խաղաղապահներուն ներկայութեամբ եւ յանձնառու կը մնայ փոխադարձ լաւ յարաբերութիւններուն, որոնք հաստատուած են 1978 թուականէն ի վեր: Վարչապետ Նաուաֆ Սալամ, իր կարգին, դատապարտեց ԵՈՒՆԻՖԻԼ-ի դէմ յարձակումը եւ շեշտեց, որ Լիբանան յանձնառու կը մնայ խաղաղապահներուն առաքելութիւնը երկարաձգելու առաջարկին, պահանջելով անյապաղ ձեռքակալել յանցագործները:

Հըզպալլայի «Հաւատարմութիւն Դիմադրութեան» խմբակցութեան անդամ երեսփոխան Ալի Ֆայյատ շեշտեց Լիբանանի մէջ ԵՈՒՆԻՖԻԼ-ի ուժերուն ներկայութեան կարելորութիւնը: Խօսելով վերջերս խաղաղապահներուն նկատմամբ գործուած բռնութիւններուն մասին, Ֆայյատ ցաւ յայտնեց, թէ ո՞նքն կը փորձեն աւելի ընդարձակ ծաւալ տալ մամր խնդիրներուն:

Շիիններու գերագոյն խորհուրդի փոխնախագահ շէյխ Ալի Խաթիպ հարաւի բնակչութեան կոչ ուղղեց դրական վերաբերմունք ցուցաբերելու խաղաղապահներուն նկատմամբ, «հիմնուելով մեր ազգային եւ մահմետական արժեհամակարգին վրայ»: Խաթիպ գգուշացուց, որ ԵՈՒՆԻՖԻԼ-ին եւ բնակչութեան միջեւ կրկնուող խնդիրները չեն ծառայեր Լիբանանի ազգային շահերուն, չեն ազատագրեր բռնագրաւեալ հողը եւ չեն զսպեր խրայէլեան նկրտումները, այլ կը շահագործուին թշնամիին կողմէ՝ վնաս հասցնելու Դիմադրութեան ու մեր արդար իրաւունքներուն:

ՍԱՀՄԱՆՈՒԿ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄ

Վերջին շրջանին իսրայէլեան ոտնձգութիւններուն աճէն ետք իրավիճակը տակաւին չէ բնականոնացած հարաւային գօտիին եւ Պէյրութի հարաւային արուարձաններուն մէջ: Շուրջ 50 զինուորներ բաղկացած իսրայէլեան խումբ մը երէկ ներթափանցեց Թֆարքիլայի ուղղութեամբ, ապա որոշ ժամանակ ետք մահանջեց, սահմանային որոշ աշխատանքներու իրականացումէն ետք:

Լիբանանեան բանակէն շրջուն ջոկատ մը երէկ այցելեց Պէյրութի հարաւային արուարձաններու Սէն Թէրէզ շրջանը՝ ստուգելու համար շէնք մը, որ նախապէս յարձակումի ենթարկուած էր վերջին պատերազմին ընթացքին: Նոյն շրջանին մէջ, երէկ շէնք մը փլուզուեցաւ Ապտէլ Նուր փողոցին վրայ՝ վերջին պատերազմին ընթացքին թիրախաւորումէն կրած ծանր վնասներուն պատճառով:

ՀԻՒԼԵԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՎ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Իրանի արտաքին գործերու նախարար Ապպաս Արաղճի յայտնեց, որ Կիւրակի օր հիւլէական հարցով բանակցութիւններու շարունակութեամբ պիտի երեւի, թէ Իրանի հիւլէական խաղաղ ծրագիրը երաշխաւորող համաձայնութեան մը կնքումը դարձած է աւելի հաւանական: Նախարարին համաձայն, որեւէ համաձայնութեան կնքում պէտք է երաշխաւորէ Իրանի նկատմամբ սահմանուած պատժամիջոցներու ամբողջական չեղարկում եւ եուրամիւսի հարստացումի աշխատանքներու շարունակութիւն: Հիւլէական ուժանիւթի միջազգային գործակալութեան հովանիին տակ: Իրանի պաշտպանութեան նախարարը իր կարգին գգուշացուց, թէ համաձայնութիւն չկնքելու եւ պատերազմ պարտադրելու պարագային Իրան պիտի թիրախաւորէ շրջանին մէջ գործող ամերիկեան խաբիսները, իսկ ամերիկացի զինուորները պէտք է անյապաղ հեռանան տարածաշրջանէն: Իսկ հիւլէական ուժանիւթի իրանեան գործակալութեան նախագահ Մոհամմատ Իսլամի կողմնակալ ու քաղաքական համարեց Իրանին վերաբերող միջազգային զեկոյցները: Ան նշեց, որ Թեհրան շարք մը խիստ քայլերու պիտի ձեռնարկէ, եթէ միջազգային գործակալութիւնը առնէ Իրանը թիրախաւորող որոշումներ:

Միւս կողմէ, ամերիկեան զինուած ուժերու կեդրոնական հրամանատարութեան ղեկավար զօրավար Մայքըլ Քըրէլա յայտնեց, որ իրենք պատրաստ են կործանարար սաստիկ ուժ գործածելու՝ խափանելու համար հիւլէական զէնքի տիրանալու Իրանի ջանքերը: Միացեալ Նահանգներու նախագահ Տոնըլտ Թրամի յայտնեց, որ կը նախընտրէ Իրանի հետ յանգիլ դիւանագիտական համաձայնութեան, խուսափելու համար հաւանական բախում: Շեշտելով, թէ կարելի չէ Թեհրանին արտօնել, որ տիրանայ հիւլէական զէնքի, Թրամի մտահոգութիւն յայտնեց, որ իրանցիները ըստ երեւոյթին հետաքրքրուած չեն հիւլէական համաձայնութիւն կնքելու առաջարկներով: «Կարծեմ սխալ կը գործեն, սակայն սպասե՛ք, տեսնելու որ ինչ պիտի վճռեն», ըսաւ ամերիկացի նախագահը:

Ինչ կը վերաբերի Չինաստանին, ամերիկացի նախագահը յայտնեց, որ Ուաշինկթըն եւ Փեքին համաձայնութեան կը յանգին տնտեսական ու առևտրական զանազան թրջածրարներու շուրջ: Ըստ Թրամիփի, համաձայնութիւնը ամերիկացի-

ԿԱԶԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՊԱՅԹՈՒՄ ԵՒ ԶՈՐԵՐ

Հայաստանի մէջ յաճախ կը կրկնուին կազի արտահոսքէ յառաջացած մահացու պայթումները: Նորագոյնը տեղի ունեցաւ երէկ Գեղարքունիք գաւառի ճամբարակ քաղաքին մէջ, ուր, նախնական տուեալներով, կազի արտահոսքի պատճառով տեղի ունեցած պայթումէն փլուզուեցաւ կառոյց մը: Ըստ տարածքային կառավարումի եւ ենթակառոյցներու նախարար Դաւիթ Խուտաթեանին, պայթումին պատճառով զոհուած է առնուազն չորս մարդ, վիրաւորուած են 12 ուրիշներ: Նախարարը խոստացաւ անյապաղ օգնութիւն ցուցաբերել, որպէսզի քաղաքացիները չմնան անապաստան:

ՅԻՇԵԼՈՎ ՀՆՁԱԿԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏ ԸՆԿԵՐ ԱՐՍԷՆ ՏԱԳԷՍԵԱՆԸ

(Մահուան 7-րդ տարելիցին առիթով)



Արսէն Տագէտեան անունը աւագ սերնդակիցներու համար կը յիշատակուի իբրեւ մուլիբեալ հնչակեան, գաղափարապաշտ գործիչ եւ օրինակելի ընկեր: Անոր կեանքն ու գործունեութիւնը կը բնորոշուին որպէս ազնիւ ու անշահախնդիր ծառայութեան կերպար:

Դեռ պատանի հասակին միացած էր Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, իր երիտասարդութեան ընթացքին ըլլալով Ա.Դ.Հ.Կ. «Տխրունի» ուսանողական-

երիտասարդական միութեան սիւներէն, որուն ճամբով նաեւ եական նպաստ բերած է Հնչակեան կուսակցութեան գաղափարաբանութեան տարածման: Ընկեր Արսէնի եւ գաղափարակից ընկերներու առաջնորդութեամբ «Տխրունի»-ն վերածուեցաւ կազմակերպուած հարթակի մը, որ հայ երիտասարդութիւնը կ'առաջնորդէր կրօնութեան, մշակոյթի եւ քաղաքական գիտակցութեան ուղիով:



Ընկ. Արսէն Տագէտեան իր գաղափարի ընկերներով

Ընկեր Արսէն Տագէտեան երբեք պաշտօնի ձգտում չունեցաւ, չնայած որ բոլոր արժանիքները ունէր անոր: Ան երբեք չթուլցուց իր մուկրունը՝ ո՛չ դժգոհելով, ո՛չ ալ երբեւիցէ իր ընկերվարական համոզումէն շեղելով: Շարունակեց գործել լուռ, խոնարհ, բայց անգիշում համոզումով չհեռանալով պատասխանատուքէն: Իր մտածումները համեստութեամբ արտայայտեց, սակայն եթէ բան մը ունէր ըսելիք՝ կ'ըսէր ուղիղ, մաքուր եւ արդար:

Նախածեռնող էր եւ հետեւողական: Անաչառ ու անկեղծ: Իր ընկերային շփումներով եղած է անկեղծ, արդարամիտ ու փրելի: Երբ ան ներգրաւուէր հակասութեան մը լուծման մէջ, բոլոր կողմերը վստահութեամբ կ'ընդունէին ընկերոջ առաջարկները, որովհետեւ ան կ'անգնած կ'ըլլար արդարութեան ու ճշմարտութեան հիմքերուն վրայ:

Իր առաջարկները չընդունուելու պարագային բնաւ չէր վշտանար վարչութենէն, ընկերներէն կամ գերագոյն մարմինէն: Չէր հեռանար կամ աջ ու ահեակ չէր բամբասեր: Կը շարունակէր իր համոզուած գաղափարին հետեւիլ ամենայն խոնարհութեամբ: Իր մնամները մոմի լոյսի պէս կը փնտռուին օր ցերեկով:

Իր բնաւորութեան մման ալ դաստիարակեց իր երկու զաւակները, որոնք իրենց ապրած հայագաղութներուն մէջ իրենց լայն նպաստը կը շարունակեն բերել ազգապահպանման եւ կուսակցական առաքելութեանց մէջ:

Պէտք չէ մոռնալ իր կողակիցը՝ Սեդա Կիզէլեանը, որ թեւ ու թիկունք մնաց իր կողքին, երբեմն առաւել թունդ քան գաղափարապաշտ ամուսինը:

Ընկեր Արսէն հայրենասէր մարդ էր: Բոլոր ջանքերը ուղղած էր նաեւ Հայրենիքին մուկրունով ծառայելու մէջ: Իրեն համար իշխանութիւնները՝ նախագահներէն մինչեւ վարչապետները, «եկող ու գացող» էին միայն, իսկ Հայրենիքը՝ անփոխարինելի մշտական յեմարան: Կը հաւատար, որ բոլորն ալ այսպէս պէտք է մտածեն ու գործեն՝ Հայրենիքը պէտք է մնայ մեր ամուր հիմքը:

Օրինական մարդ էր եւ մնաց օրինականութեան հետ: Ընկերասէր, մարդասէր, ընկերվարականի բոլոր յատկանիշները կը կոեր ընկեր Տագէտեանը:

Վարած է մաքրամաքուր կեանք, հեռու ծխախոտի կամ խմիչքի չարաշահումներէն:


Ափսոս, շատ ափսոս որ կեանքէն շուտ հեռացաւ, 13 Յունիս 2018-ին, 73 տարեկան հասակին: Դեռ շատ բան ունէր տալիք ան:

20 կախաղաններու 110-ամեակի նախօրէին կ'արժէ իր յիշատակն ալ թարմացնել անվերադարձ մեկնումէն եօթը տարի ետք:

Աստուած հոգին լուսաւորէ:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԲԱՆԱԿԻՆ ԵՒ ԵՈՒՆԻՖԻԼ-Ի ՄԻՋԵՒ

Պաշտպանութեան նախարար Միշէլ Մնասսա եւ խաղաղապահ ուժերու հրամանատար Արլուտօ Սազարօ Եարզէի մէջ ստորագրեցին նոր համաձայնութիւն մը, ըստ որուն՝ խաղաղապահները ֆրանսական աջակցութեամբ կը զօրակցին լիբանանեան բանակի ուժանիւթային եւ սննդական կարիքներուն:



Մնասսա իր արտասանած խօսքին մէջ կարեւորեց բանակ-ԵՈՒՆԻՖԻԼ համագործակցութիւնը, մաղթելով որ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդը շուտով երկարաձգէ խաղաղապահ ուժերուն առաքելութիւնը:

ԱՌՒՆ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ ՃՆՇՈՒՄ ԲԱՆԵՑՆԵԼ ԻՍՐԱՅԷԼԻ ՎՐԱՅ

Հանրապետութեան նախագահ Ժազէֆ Աուն Պաապտայի պալատին մէջ ընդունեց Ֆրանսայի նախագահի յատուկ պատուիրակ ժան Իվ Լը Տրիանը՝ քննարկելու երկկողմանի




յարաբերութիւնները եւ տարածաշրջանային զարգացումները: Աուն միջազգային ընտանիքէն վերստին պահանջեց ճնշում բանեցնել Իսրայէլի վրայ՝ վերջ դնելու համար անոր շարունակական ոտնձգութիւններուն եւ ապահովելու իսրայէլեան մահանջը Լիբանանի սահմանային բռնագրաւեալ բլուրներէն:

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ներուն հնարաւորութիւն պիտի տայ կարելոր մետաղներ ներածելու Չինաստանէն, անոր դիմաց չինացի ուսանողներուն արտօնելով ծամբորդել Միացեալ Նահանգներ՝ հետեւելու համար իրենց համալսարանական դասերուն:

ԱՊԱԿՅՅՈՒՆՈՒԹԻՒՆ ԳԱԼԻՖՈՐՆՈՅ ՄԵՋ

Ապակայունութիւնը կը տիրէ ամերիկեան Լոս Անճըլըս քաղաքին եւ այլ շրջաններու մէջ, ուր ոստիկանութեան եւ ցուցարարներուն միջեւ բախումներ տեղի կ'ունենան ապօրինի զաղթականները հետապնդելու որոշումի լոյսին տակ: Լոս



Անճըլըսի ոստիկանութիւնը յայտարարեց, թէ անցնող չորս օրերուն ձերբակալուած է առնուազն 378 մարդ՝ ապօրինի հաւաքներ կազմակերպելու եւ ապահովական ուժերուն նկատմամբ բռնութեամբ վարուելու յանցանքով: Գալիֆորնիոյ մահանգապետ Կէվըն Նիւսըմ յայտնեց, որ պիտի շարունակէ պաշտպանել մահանգի բնակչութեան իրաւունքները եւ այդ հարցով դիմել դատական մարմիններուն: Ան ահագանգեց, որ նախագահ Թրամփն ու իր համակիրները կը շահագործեն առկա տարակարծութիւնները՝ իրենց իշխանութիւնը ամրապնդելու համար: Թեքսասի մահանգապետ Կրէկ Ապօ իր կարգին յայտնեց, թէ ազգային պահակազոււնդէն ուժեր պիտի տեղակայէ մահանգին մէջ՝ վերականգնելու համար կայունութիւնը, անցնող օրերուն այնտեղ եւս տեղի ունեցած անկարգութիւններու լոյսին տակ:

ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆԻ ԱԶ ԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 70-ԱՄԵԱԿ

Կիրակի, 1 Յունիս 2025-ին, Լոս Անճելոսի եւ շրջակայքի հայութեան ժամադրավայրը դարձած էր Հայց. Առաքելական եկեղեցւոյ Պրբալեմի առաջնորդանիստ Ս. Ղեւոնդ Մայր տաճարը, որ բերնէ բերան լեցուն էր հաւատացեալներով: Մատուցուող Ս. պատարագին կը նախագահէր Արեւմտեան թեմի Առաջնորդ՝ գերշ. Տ. Յովնան արք. Տէրտէրեան: Ներկայ էր



ճաշակովի խորհուրդի ատենապետ տիար Էդիք Դուկասեան՝ իր տիկնոջ Ատրիսի հետ, ինչպէս նաեւ Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ մարմինի ատենապետ Սիրան Խաչատուրեան եւ յարակից կառոյցներու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Պատարագի կիսուն տեղի ունեցաւ արարողակարգային ընդհատում: Առաջորդ Յովնան Սրբազան խորան բարձրացաւ, իր շուրջ ունենալով Տէր Մանուկ աւ. քինյ. Մարգարեանն ու Տէր Խաժակ քինյ. Շահպազեանը, ողջունեց օրուան մեծարեալ Գաբրիէ Մոլոյեանը, որ կը ներկայանայ եօթը տասնեակ տարիներու մեծ վաստակով, արժանի այս գնահատանքին: Այնուհետեւ Տէր Մանուկ աւ. քինյ. կարդաց առաջնորդ Յովնան Սրբազանի «Գիր Օրնութեան եւ Գնահատականաց առ հաւատարիմ գաւակն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ մեծարեալ տիար Գաբրիէ Մոլոյեանին» պաշտօնական գրութիւնը:

Արդարեւ, այդ գրութեան մէջ սրբազանը կ'ընգծէ. «Ձեր ողջ կեանքը բնորոշուեցաւ հմուտ եւ լուսամիտ լրագրողի, խմբագրի եւ կրթական մշակի պատուաբեր հանգանակներով: Տասնամեակներ շարունակ, բացառիկ նուիրումով ծառայեցիք նախ Սիջին Արեւելքի եւ ապա Գալիֆորնիոյ մէջ հայ ազգային, քաղաքական, կրթական, համայնքային, մշակութային ու լրագրական ասպարէզներուն մէջ, որոնց համար արժանացաք բոլորիս յարգանքին ու մեծարանքին: Լիբանանի մէջ, այլ գործընկերներու հետ, հիմնեցիք Նոր Մերունդ Մշակութային Միութիւնը, ԱՄՆ փոխարդուելով

շարունակեցիք Ձեր օգտաշատ ծառայութիւնները բերել ազգային, հասարակական, կրթական եւ մշակութային բնագաւառներու մէջ եւ ձեռնհասօրէն վարեցիք զանազան պատասխանատու պաշտօններ: Բազմաթիւ անգամներ ստանձնեցիք ՍՂԴԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ մարմինի ատենապետութիւնը: Երկար տարիներ եղաք Նոր Մերունդ Մշակութային Միութեան ատենապետը: 1984-ին, խումբ մը ուսումնաստեմը ընկերներու աջակցութեամբ իրականութիւն դարձուցիք հայկական ամենօրեայ վարժարան մը ունենալու երազանքը՝ «Յովսէփեան» վաժարանը, որ կենսական ջիղը դարձաւ շրջանի հայութեան կենսունակութեան, եւ, Հայ եկեղեցւոյ կողքին, նորահաս սերունդներու մէջ հայկական գիտակցութեան եւ հայապահպանութեան ամրապնդման: Առ ի գնահատութիւն ձեր երկարամեայ ազօգուտ ծառայութիւններուն, 2005 թուականին, արժանացաք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի հայրապետական կոնդակին եւ պարգևատրուեցաք «Սուրբ Ներսէս Շնորհալի» շքանշանով:



«Մեծարեալ տիար Գաբրիէ Մոլոյեան, Ձեր ծննդեան 92-րդ տարեդարձին առթիւ մեր արօթքն ու մաղթանքն է, որ Աստուած առողջութիւն Հշորիէ Ձեզի, որպէսզի Ձեր վաւերական հայու, հօր ու մեծ հօր գուրգուրանքները ընդերկար շաղախուին Ձեր գաւակին, թողնէրուն ու հարազատներուն կենսքին հետ: «Ի գնահատութիւն Ձեր եօթը տասնամեակներու անխնայ ու բոլորամուկ ծառայութեանց, այսու դուք կը դառնաք երկրորդ անձը, որուն անունը պիտի արձանագրուի Արեւմտեան թեմի 100-ամեակին առթիւ պատրաստուած հարիւրամեակի մեծարեալներու անունը կրող մարմարեայ ցուցատախտակին վրայ»: Այս առթիւ, Յովնան Սրբազանը մեծարեալ Գ. Մոլոյեանի տիկնոջ Մարիային նուիրեց 100-ամեակի առթիւ պատրաստուած կնոջական թանկարժէք շղարք մը, իսկ օրուան պատարագից Տէր Խաժակ քինյ. Շահպազեանի քահանայական օծման 17-րդ տարեդարձին առթիւ իրեն նուիրուեցաւ պատարագի ընթացքին գործածուող սկիի մը:

Իր ելոյթի աւարտին, Յովնան Սրբազանը անձնապէս եւ թեմական խորհուրդի ատենապետ Տէրիք եւ Ատրիսէ Դուկասեանի, քահանայից դասի ու ներկայ հաւատացեալներուն անունով շնորհաւորեց Գաբրիէ Մոլոյեանն ու իր ազնուափայլ տիկինը, աղօթելով որ բարձրեալ Աստուած մշտապէս օրինէ եւ քաջառողջ ու երկար տարիներու իմաստուն եւ բեղուն գործունէութիւն պարգեւէ անոնց, ներշնչելով նորահաս սերունդները եկեղեցին սիրելու, ազգը սիրելու, մշակոյթի առջեւ խոնարհելու եւ իմաստաւորելու իրենց կեանքը:



Այնուհետեւ ներկաներուն մէկ մասը համախմբուեցաւ առաջնորդական համալիրի «Համբար» սրահը, ուր տեղի ունեցաւ զինեծօն եւ հայկական ուստեսի հիւրասիրութիւն: Այստեղ Յովնան Սրբազանը բաժակ բարձրացնելով առաջարկեց քաջառողջ եւ երկար ու բեղմնաւոր տարիներու կենաց խմել մեծարեալ Գաբրիէ Մոլոյեանին եւ իր կնոջ Մարիային: Պատասխան խօսքով հանդէս եկաւ օրուայ մեծարեալը եւ իր սրտաբուխ խորին շնորհակալութիւնները յայտնեց Արեւմտեան թեմի բարեջան առաջնորդ Տէր Յովնան արք. Տէրտէրեանին, թեմական խորհուրդին, Ս.Դ.Հ.Կ. Վարիչ մարմինին, յարակից կառոյցներուն, բարեկամներուն եւ համակիրներուն իրենց աջակցութեան եւ զօրակցութեան համար:

Ստեղծուած ընկերական ջերմ եւ համակրալի մթնոլորտին մէջ առկայ էր տօնական բարձր տրամադրութիւն: Եղան նաեւ հաճելի անակնկալներ: Մեներգներով հանդէս եկան շնորհալի կատարողներ՝ երգչուհի Սիւզի Մազմանեան եւ Յարութ Տէր Դաւիթեան, որոնք իրենց ազգային եւ հայրենասիրական երգերով առաւել եւս ջերմացուցին արդէն իսկ խանդավառ մթնոլորտը:

Յետմիջօրէին ներկաները ակամայ բաժնուեցան սրահէն, շնորհաւորելով օրուան մեծարեալը, իրենց հետ տանելով զեպկի նախածեռնութեան մը առթած յիշարժան տպաւորութիւնները:

«Մասիս» շաբաթաթերթ - ԱՄՆ

ԻՄ. ԴԱՐՆ ՈՒ ՀԱՅ ԿԻՆԸ

Դ. դարէն սկսեալ, տարբեր ժամանակներու կտրուածքով գրաւոր վկայութիւններ հասած են մեզի, ուր շեշտուած կը գտնենք հայ կնոջ եւ տղամարդու իրաւունքներու հաւասարութեան մինչ օրս չսպառած միւլքը:

ԺԲ. դարուն, կրօնաւոր, տասէն աւելի գիրքերու հեղինակ, գիտնական, իրաւագէտ եւ առակագիր Մխիթար Գոշ ըսած է՝ «Կրթութեան կինը գանձ է հասարակութեան համար»: Անոր նշանաւոր «Դատաստանագիրքը» դրոյթներ կը ներկայացնէ բռնի ամուսնութիւններու դէմ, կը խրախուսէ սեփականութեան հաւասար բաժանումը, կը խօսի իգական սեռին պատիւն ու արժանապատուութիւնը յարգելու, անոր ամուսնական տարիքի, ամուսնալուծուելու, կրկին ամուսնանալու եւ այլ իրաւունքներու մասին:

Այսպիսի ձեւակերպումի մը կը հանդիպինք հայկական առաջին սահմանադրութիւնը համարուող «Որոգայթ փառաց» երկին մէջ (ԺԸ. դար), որ շարադրուած է Շահամիր Շահամիրեանի կողմէ. «Մարդկային արարածը, հայ ըլլայ, թէ այլ ազգի ներկայացուցիչ, տղամարդ, թէ կին, Հայաստան ծնած ըլլայ, թէ անոր սահմաններէն դուրս, պէտք է ապրի հաւասարութեան մէջ եւ հաւասար ըլլայ իր ծաւալած գործունէութեան մէջ: Ոչ ոք իրաւունք ունի հպատակեցնել ուրիշները, իսկ աշխատողները պէտք է վճարուին այնպէս, ինչպէս սովորաբար կը վճարուին ծաւալուած գործունէութեան համար»:

Կնոջ իրաւունքի եւ իրաւահաւասարութեան վերաբերեալ գրեթէ նոյն բովանդակութիւնը կը գտնենք 1860-ին Կոստանդնուպոլսոյ մէջ ընդունուած «Ազգային սահմանադրութեան» մէջ:

Հայոց պատմութեան բոլոր փուլերուն կինը միշտ եղած է, այսօր ալ կը շարունակէ մնալ ազգի գոյութեան ու յարստեւունի յենասիւնը: Իրմով է, որ ընտանիքը կը միաւորուի, իրմով է, որ կը պահպանուին աւանդոյթները, իր աշխուրջ հսկողութեամբ է, որ հասակ կ'առնեն սերունդները:

Մեր աստուածուհիները, թագուհիները, մինչեւ իսկ պարզ շինական կինը, առանցքային տեղ գրաւած են հազարամեակներու պատմութեան մէջ: Ձուր չէ, որ մօր մարմնաւորումով կը ներկայացուի հայրենիքը՝ «Մայր Հայաստան»։ զուր չէ «մայրաբաղաք» անուանումը, զուր չէ, որ «մայրուղի» կ'անուանեն մեծ քաղաքներու ընդարձակ պողոտաները, զուր չէ, որ «Մայր Լեռ» կը կոչուի մեր հոգեւոր-վարչական կեդրոնը... Կինը ընդհանրապէս եւ մայրը՝ յատկապէս, միշտ իրենց պատուաւոր տեղը գրաւած են մեր հանրային կեանքին մէջ:

Սակայն զանք, հասնիք մեր օրերուն:

Կնոջ դերը դարերու ընթացքին զարգացում ապրած է, իսկ 21-րդ դարուն, պէտք է նշել, շատ աւելի մեծ ու բազմազան դարձած են ակնկալութիւնները իրմէ: Պատճառը, բնականաբար, ժամանակակից հասարակարգի բարդութիւններն են, երբ աւանդական դերերը նոր իմաստ կը ստանան եւ ամէն նոր օր դուռ կը բանան նոր կարելիութիւններուն:

Կինը բազմաշերտ անհատականութիւն եղած է միշտ: Ան կարիք ունի յարմարելու հմտութեան, ծկունութեան եւ սեփական եսի զօրեղ զգացողութեան, քանի որ պարտաւոր է հաւասարակշռել ընտանիքը, աշխատանքային գործուէ-

թիւնը եւ անձնական ձգտումները: Ժամանակակից կնոջ կեանքին մէջ էական բաղադրիչներ են իր անկախութիւնն ու կայունութիւնը: Յաջողութեան հասնելու համար կինը թէ՛ նիւթական, թէ՛ զգացական առումով պէտք է ըլլայ ինքնավստահ: Իր աշխոյժութեամբ, ղեկավարելու ձիրքով եւ ամենօրեայ փոխադրեցութիւններու միջոցաւ ան կոչուած է մարտահրաւէր նետելու կարծրատիպերուն, կոտրելու խոչընդոտները եւ ստեղծելու շատ աւելին պարփակող միջավայր: Աշխարհը օր-օրի աւելի ու աւելի փոխկապակցուած կը դառնայ եւ կինը յաճախ կ'ընկալուի որպէս իր ընտանիքին եւ համայնքին յուզական խարխիւը, որմէ կ'անկալուի հանդուրժողականութիւն եւ համագործակցութեան ոգի:

Բարձր կը գնահատուի այն կինը, որ յաջողած է կառավարել յարաբերութիւնները, կողմնորոշուիլ ընդհարումներու ընթացքին, միաժամանակ պահպանելով դրական ընկերային միջավայր:



Այսօր նոր իմաստ ստացած է նաեւ կանացիութիւնը, որ ձեւով մը ձեռնոց է՝ նետուած հին ըմբռնումներու դէմ: ԻՎ. դարու կին ըլլալ կը նշանակէ ընդգրկել ինքնութեան եւ անոր արտայայտութիւններուն բազմազան լուսապատկերը: Իր ընտրած վարքագիծով կամ արարելակերպով (անշուշտ զանց չառնելով որոշակի չափանիշներ) կինը իր անհատականութիւնն է, որ կ'արտայայտէ եւ վեր կը կանգնի հասարակական կանոններէն, որոնք շատ անգամ կը սահմանափակեն իր ներուժը: Մերօրեայ կինը գիտէ կարելորել իր հոգեկան եւ ֆիզիքական առողջութիւնը, բայց դիւրին չէ բազմաթիւ պարտականութիւններու եւ պարտաւորութիւններու առեմբեր կառավարել աշխատանք-ընտանիք-անձնական կեանք հաւասարակշռութիւնը:

ԻՎ. դարը դեռ չէ հասած տղամարդ-կին հաւասարութեան: Կին-մօր մը ֆիզիքական եւ յուզական ծանրաբեռնութիւնը միշտ գերազանցած է տղամարդունը, բայց այս մէկը արդէն բնութեան «մեղք»-ն է...

Երբ կ'ըսենք «ԿԻՆ», անշուշտ նկատի ունինք նաեւ հայ կինը, որ եթէ կը տարբերի աշխարհի այլ ազգութիւններու կիներէն, ապա կը տարբերի իր նուիրումին չափով: Նուիրում բառին ամենալայն իմաստով եւ նշան նաեւ, որ «հայ կին»

ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ (Երեւան)

ըսելով, նկատի ունին ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ Սփիւռքի հայ կինը, այս անգամ այն տարբերութեամբ, որ Հայաստանի կին-մայրը ամենէն սուղը՝ իր որդիները կ'ընծայէ Հայրենիքի պաշտպանութեան: Այս սուրբ պարտականութիւնը իրն է բացառապէս:

ԻՎ. դարու հայ կինը միաձուլուած է աւանդական արժէքներու եւ ժամանակակից միտումներու, որ աւելի ու աւելի կը կատարելագործուի բարձրագոյն կրթութեամբ եւ արհամարհելի չէ թիւր անոնց, որոնք կարելորագոյն դիրքերու հասած են իրաւունքի, բժշկութեան, ճարտարագիտութեան ու արուեստի ասպարէզներուն մէջ: Հայ կանայք թէ՛ Սփիւռքի, թէ՛ Հայաստանի մէջ սկսած են հաւասարակշռել աւանդական դերերը մասնագիտական գործունէութեան հետ: Անոնք պետական բարձր պաշտօններ ունին, ձեռնարկատէրեր են, ճարտարագէտներ, մանկավարժներ եւ շատ մը այլ ոլորտներու առաջատարներ, որոնք եւականօրէն կը նպաստեն իրենց երկիրներու զարգացման: Քիչ չեն նաեւ այն կիները, որոնք ազդեցիկ դերեր ստանձնած են արուեստի, գրականութեան, երաժշտական աշխարհի մէջ: Անոնք իրենց ընտրած հարթակները կ'օգտագործեն արտայայտելու ժամանակակից խնդիրները, ինչպէս նաեւ աստարելու համաշխարհային մշակութային երկխօսութեան:

Հակառակ ժամանակակից տեղաշարժերուն, ընտանիքը հայ կանանց մեծամասնութեան համար կը շարունակէ մնալ կեանքի հիմնաքարը եւ մեծամասնութեան համար առաջնահերթ կը մնայ ընտանիքին բարեկեցութիւնը: Հայաստանցի կինը նախանձելի է իր տոկունութեամբ, մասնաւորաբար պատմական մարտահրաւէրներու եւ տարածաշրջանային հակամարտութիւններու շարունակական ազդեցութեան դիմաց: Սփիւռքի հայ կինը, մինչդէռ, նշանակալի դեր կը խաղայ իր համայնքէն ներս՝ նպաստելով օտար երկրի մէջ հայոց լեզուի եւ մշակոյթի պահպանումին: Բազմաթիւ սփիւռքահայ կիներ ներգրաւուած են բարեգործական շարժումներու մէջ եւ կ'աջակցին Հայաստանի կրթական, մշակութային եւ մարդասիրական շատ մը ծրագրերու, միաժամանակ համաշխարհային հարթակներու վրայ ջատագովելով հայկական խնդիրները:

Միով բանիւ, ԻՎ. դարու հայ կինը տիեանմիջ կերպար է, որ պայքարի մէջ է իր արժանի տեղը գրաւելու այս բարդ ու զարգացող աշխարհին մէջ՝ միաժամանակ նպաստելով ինչպէս իր նեղ շրջանակին, այնպէս ալ աւելի լայն հանրութեան:

ԻՎ. դարուն շատ աւելի մեծցած է հայ կնոջ դերը ոչ միայն որպէս ընտանիքի յենասիւն, այլ որպէս տարբեր ասպարէզներու մէջ իր ուրոյն դերն ու ծայր պարտադրող մասնագէտ:

Այսօր կնոջ դերը զգալի վերափոխումի ենթարկուած է իր տեսանկիւններով եւ տարբեր ոլորտներու մէջ մասնակցութեամբ՝ ներառեալ քաղաքականութիւնը, առեւտրական ասպարէզը, գիտութիւնը եւ արուեստը:

21-րդ դարու կինը աւելի հզօր է, քան երբեք:

Հայ երաժշտական Գոհարներեն ՍԵՊՈՒՀ ԱՐԳ-ԱՐԵԱՆ (1930-2014)

Ծննդեան 95-ամեակ

Սեպուհ Աբգարեանը մեծարժեք հայ երաժիշտ, երգահան, խմբավար, ծայնասփիւռի հաղորդավար ու մշակութային գործիչ մըն էր, որ իր ամբողջ կեանքով ու ստեղծագործութեամբ ծառայեց հայ ժողովուրդի հոգեւոր ու արուեստի հարուստ ավանդներուն:



Կեանքի ու ուսումնառութեան սկիզբը
Ծնած է 12 Յունիս 1930-ին, Կիպրոսի Նիկոսիա քաղաքը: Հայրը՝ սասունցի արմատներով: Ընտանիքը վաղ տարիքին տեղափոխուեցաւ Պէյրութ, ուր ան սկսաւ իր երաժշտական ուսումը՝ Էդուարդ Տարօնեանի եւ Բարսեղ Կանաչեանի մօտ: 13 տարեկանին ընտանիքը դարձեալ փոխադրուեցաւ՝ այս անգամ Հալէպ: Այնուհետեւ մեկնեցաւ Փարիզ՝ երաժշտական բարձրագոյն ուսման նպատակով:

Ուսուցչական եւ ծայնասփիւռային գործունէութիւն
Փարիզէն վերադարձին, Աբգարեան հաստատուեցաւ Կիպրոս եւ իր ուսուցչական գործունէութիւնը շարունակեց հայկական վարժարաններէն մէկուն մէջ՝ իբրեւ երգչախումբի խմբավար: Միաժամանակ, երկու այլ հայերու հետ հիմը դրաւ Կիպրոսի հայկական ծայնասփիւռի հաղորդումներուն, որոնք ղեկավարեց ու վարեց շուրջ 46 տարի՝ դառնալով համայնքի մշակութային ինքնութեան պահպան ծայնը: Միաժամանակ պաշտօնավարեց Մելգոնեան կրթական հաստատութեան մէջ որպէս երգչախումբի ղեկավար եւ դասաւանդեց արուեստի պատմութիւն:

Երաժշտական ստեղծագործութիւն եւ «ԳՈՂԱՐ» համոյթ
Սեպուհ Աբգարեան հեղինակած է բազմաթիւ սիմֆոնիկ, կամերային, խմբերգային գործեր ու «օրաթորիօ»ներ, որոնք կատարուած են աշխարհի զանազան քաղաքներու մէջ՝ Փարիզ, Թոքիօ, Լիբանան, Կիպրոս, Միացեալ Նահանգներ: Անոր ամենանշանաւոր նախածեմութիւններէն մէկը եղաւ 140 երաժիշտներէ եւ 12 մեներգիչներէ կազմուած «ԳՈՂԱՐ» սիմֆոնիկ նուագախումբի եւ երգչախումբի գեղարուեստական ղեկավարումը: Այս համոյթը համերգներով հանդէս եկած է թէ՛ Հալէպ-Երասխայի, եւ թէ՛ Սփիւռքի բազմաթիւ զաղթածախներուն մէջ:

Վախճան եւ յուշ
Սեպուհ Աբգարեան մահացած է 5 Օգոստոս 2014-ին, իր ծննդավայր Նիկոսիոյ մէջ: Իր անունը կը յիշուի իբրեւ նուիրեալ մշակութային գործիչ, որ իր ամբողջ եւութեամբ ծառայեց հայ երգին, լեզուին ու ոգիին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾԻՊԵԱՆ ՆՈՒԱԳԵՅ ԱՅՆՊԷՄ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԲԱԲԱՆԵՐ ԻՐ ՍԻՐՏԸ

6 Յունիս 2025 թուականին, Վիեննայի մէջ կեանքէն անժամանակ հեռացաւ տաղանդաւոր լիբանանահայ դաշնակահար եւ ճագ երաժիշտ Յովհաննէս Ծիպեան: Ան ապրեցաւ ու ստեղծագործեց՝ երաժշտութիւնն ու մարդոց սրտերը իրար կապող կամուրջ դառնալով: Իր ապրած ճամբան ոչ միայն նուագի արուեստ էր, այլ՝ նուիրում, զգացումը եւ հաւատարմութիւն հայ մշակոյթին:

Ծնած է Պէյրութ, Ծիպեան առաջին երաժշտական ուսումը ստացած է Ազգային երաժշտանոցի մէջ: Սակայն իր ճակատագիրը կը փոխուի 1989 թուականին, երբ Լիբանանի քաղաքացիական պատերազմը կը մղէ զինք դէպի Վիեննա: Եւ այնտեղ՝ Եւրոպայի սրտին մէջ, սկսած է իր նորագոյն ու ազդեցիկ ուղին: 1997-ին անարտած է Ֆրանց Շուպերթի երաժշտանոցը՝ ստանալով համերգային եւ ճագային դաշնամուրի կրկնակի մասնագիտացում:



Ծիպեան իր ծայնով եւ մատներու յարափոփոխ մեղեդիով հմայեց բազմաթիւ սրահներու լսարաններ: Ան ելոյթներ ունեցաւ Եւրոպայի քաղաքներուն մէջ, Ծիպեան բազմաթիւ համերգներով ներկայացած է Եւրոպայի տարբեր երկիրներու մէջ եւ երկար տարիներ անփոխարինելի մասնակցութիւն ունեցած է Վիեննական ճագային կեանքին, համագործակելով միջազգային ճանաչում ունեցող երաժիշտներու հետ:

Անոր նուիրումին օրինակն էր նաեւ դասաւանդումը՝ ճագի եւ յանկարծանաւագումի (improvisation) սիրով ու նրբութեամբ փոխանցումը նոր սերունդին:

Ծիպեանի անժամանակ մահը, որ տեղի ունեցաւ Վիեննայի մէջ, խոր ցաւով ընդունուեցաւ երաժշտական համայնքին կողմէ: Իր գործընկերները զինք յիշեցին իբրեւ «լուսաւոր ընկեր», «մարդկային բարութեան մարմնացում» եւ «բեմի խոհուն պատուիրակ»:

Անոր հոգին յաւիտեան պիտի ապրի բոլոր այն սրտերուն մէջ, որոնք ճանչցած ու սիրած են այս մեծ մարդը: «Բայց մենք վստահ ենք, որ ան այժմ համերգներ կու տայ շատ անելի վեհաշուք վայրերու մէջ, քան այստեղ», գրած են ողբացեալի երաժիշտ ծանօթները համացանցին վրայ:

ARARAD DAILY NEWSPAPER


Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية
تصدر عن شركة ماسيسر للمباعة والنشر (ش.م.م.)



ՀՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

Մայիս ամսուան ընթացքին մեր գրադարանին գրական հաւաքածոն հարստացաւ նոր գիրքերով ու պարբերաթերքերով: Յայտնապէս գնահատելով հեղինակներուն եւ իրատարակիչներուն սիրալիւր նուիրումը, կը յայտնենք մեր խորին երախտագիտութիւնը: Ստորեւ կը գետնեղենք նուիրուած գիրքերուն ցանկը՝ համառօտ տեղեկութեամբ:


1) «Աստուածաբանական եւ վարդապետական միւթեր», Ա. եւ Բ. հատորներ, հայացուց գերշ. Տ. Սակար արք. Աշգարեան, Հալէպ 2025:



2) «Պատմութիւն իմաստասիրութեան Բ. հինգոյն յունական բարոյաբանութիւններ, քաղաքագիտութիւն», Արմէն Ա., Երզնկայի հրատարակչատուն, ԱՔՍՈՐ, 2025:





3) «Հասկ», Պաշտօնական ամսագիր Կաթողիկոսութեան Հայոց Սեօի Տանն Կիլիկիոյ, Թիւ 1-2, Յունուար-Փետրուար, 2025:




4) «Արցախի դէմ իրականացուած ցեղասպանութեան գիտաժողովի միւթեր» (21-22 Ապրիլ, 2024)», «Խաչիկ Պապիկեան հրատարակչական հիմնադրամ» – թիւ 18, Անթիլիաս-2025, 362 էջ:


5) «Ինքնութեան հակամարտութիւն հայերու եւ թուրքերու միջեւ Օսմանեան կայսրութեան մէջ, 1895-1918», դոկտ. Հուստա Ֆահս, «Խաչիկ Պապիկեան հրատարակչական հիմնադրամ», թիւ 19, Անթիլիաս-2025, արաբերէնով, 476 էջ:




6) «Որդիների պայքարը հայրերի դէմ», Գարեգին Նժդեհ, Պէյրութ 2025, 127 էջ:



7) «Կարելի՞ է ԱՐԵՄՍԱՅԱՅԵՐԵՆԸ ՓՐԿԵԼ այսօրուան ցաւալի վիճակէն», Պերճ Թէրզեան, Գահիրէ 2025, 43 էջ:



8) «Արեան եղբայրութիւն», Սինան ճան եւ Արա Հալիժի, թարգմանութիւն՝ Գեորգ Խաթուն Ուսնէ, «Ալ-Ֆարապի հրատարակչատուն, Պէյրութ-2025, 311 էջ:



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատրաստեց ԳԵՈՐԳ ՆԱԹԱԼԻ (ԵԱԶԸՆԵԱՆ)

– Աթանեսեան Գարիկ, Գալստեան Միհրան, Յակոբեան Գայիանէ, Անգելուշ Լուսինէ, «Պատերազմ եւ յիշողութիւն. Արցախեան երկրորդ պատերազմի յուշարձանացման հիմնախնդիրը», ՀՀ ԳԱԱ Հմագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկի հրատարակչութիւն, Երեւան, 2024, 168 էջ (2021-2023-ին դաշտային աշխատանքներու միջոցով հաւաքուած միւթերու ներկայացում եւ վերլուծութիւն): Հրատարակուած է ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզի նախարարութեան Բարձրագոյն կրթութեան եւ գիտութեան կոմիտէի զանձատրումով:

– Ալեքսանեան Նունէ (Կազմող, թարգմանիչ եւ հարցաւար), «Սերկէ Փարաճանով. Յանրժական շարժում», «Վերնատուն» հրատարակչութիւն, Երեւան, Մայիս 2025, 256 էջ (15 x 23 սմ.) (շարժարուեստի ակնանւոր բեմադրիչի կեանքին առնչուած տարբեր միւթերու ժողովածու՝ նամակներ, հարցազրոյցներ, յուշեր, խոհագրութիւններ եւ այլն):

– Էօրտեքեան Յովիկ, «Հ.Բ.Ը.Միութեան հայրենական գործունէութիւնը 1991-2021 տարիներուն (ակնարկ)», հեղինակային հրատարակչութիւն, «Զանգակ» հրատարակչութեան տպարան, Երեւան, 2025, 368 էջ (15 x 20,7 սմ.) (Հ.Բ.Ը. Միութեան հայրենական երեսնամեայ գործունէութեան ամբողջական ներկայացումը, անձնանուններու եւ օգտագործուած գրականութեան ցանկեր): Հատորը հրատարակուած է Հ.Բ.Ը.Միութեան «Լեւոն Զ. Միւրմէլեան» հիմնադրամի աջակցութեամբ:

– Կեցոյեան Գարլոս Ն. (Ketsoian Carlos N.), «Ուրուկուշ 1965 – Հայոց ցեղասպանութեան առաջին ճանաչումը» (Uruguay 1965 – Primer reconocimiento del genocidio armenio), յառաջաբանը՝ Վանիա Մարգարեանի, «Պրերեթին» հրատարակչութիւն (ediciones del Berretin), Սոնթվիկտօ, Ապրիլ 2025, 254 էջ (15,5 x 21,7 սմ.) (Հայոց ցեղասպանութիւնը առաջինը ճանչցած պետութեան Ուրուկուշի համապատասխան օրէնքի գործընթացի ամբողջական պատմութիւնը, աղիւսակներ, ձեռնարկներու եւ որմագոյներու լուսանկարներ, օգտագործուած աղբիւրներու, գրականութեան եւ յապաւումներու ցանկեր) (սպաներէն):

– Համբարձումեան Նաիրա, «Էլպիս Կեսարացեան – Էստէներ, բանաստեղծութիւններ, նամակներ», «19-րդ դարու արեւմտահայ կին հեղինակներ» մատենաշար, «Էտիք փրինք» հրատարակչութիւն, Երեւան, 2025, 172 էջ (հայերէն կնոջական առաջին պարբերաթերթի՝ «Կիթառ»ի խմբագիր եւ հրատարակիչ, հայկական կնոջական շարժման առաջին դէմքերէն Էլպիս Կեսարացեանի գործունէութիւնը՝ անոր թողածին ներկայացումով): Լոյս տեսած է «Յովսէփ եւ Գարիլին Նալպանտեան» հրատարակչական հիմնադրամի միջոցներով:

– Սերրէ Քարին (Merret Carine), «Արեւելքի քրիստոնէաները եւ Ֆրանսան. Փոթորկոտ կիրքի հազար տարի» (Les Chrétiens d'Orient et la France: Mille ans d'une passion tourmentée), յառաջաբանը՝ Ժան-Ֆրանսուա Գոլոսիմոյի (Jean-François Colosimo), «Պալլան» (Balland) հրատարակչութիւն, Փարիզ, 23 Յունուար 2025, 458 էջ (15,2 x 23,5 սմ.) (զգալի տեղ յատկացուած է Ֆրանսայի դերին հարիւր տարի առաջ Կիլիկիոյ մէջ եւ վերջին տասնամեակներուն Արցախի հարցին մէջ) (ֆրանսերէն):

– Միրաք-Վայսպալա Միրիէլ (Mirak-Weissbach Muriel), «Գերմանացի զօրավար մը եւ Հայկական ցեղասպանութիւնը – Օթթօ Լիման ֆոն Ձանտերսը պատուի եւ պետութեան միջեւ» (A German General and the Armenian Genocide – Otto Liman von Sanders between Honor and State), «Պրերկան» (Bergahn) հրատարակչութիւն, Նիւ Եորք եւ Օքսֆորտ, Յուլիս 2025 (Օսմանեան բանակին մէջ ծառայած գերմանացի զօրավարին առնչութիւնները Մեծ Եղեռնին հետ) (անգլերէն):

– «Յովհաննէս Քաջագունին ճարտարապետ», հրատարակչութիւն Համազգային հայ կրթական եւ մշակութային միութեան Երեւանի գրասենեակի, Երեւան, 2025 (15 Հոկտեմբեր 2024-ին Երեւանի մէջ կայացած գիտաժողովի զեկուցումները):

– «Յուշանատեան Հայ ազգային բուժարանի հարիւրամեակի», խմբագիր՝ Վարուժան Թեմպէլեան, հրատարակչութիւն Հայ Ազգային բուժարանի խնամակալութեան, Պէյրութ, 2024, 140 էջ (Լիբանանի Հայ Ազգային բուժարանի (1923-1938 Մասնըթէյն, 1938-էն Ազունի) համապարփակ պատմութիւնը, լուսանկարներ):

– Պենտատու Վիթթորիօ Ռոպիաթի (Bendaud Vittorio Roberti), «Ամնոռուկ – Հայոց ցեղասպանութեան պատմութիւնը եւ մոռացումը» (Non ti scordar di me – Storia e oblio del Genocidio Armeno), յառաջաբանը՝ Փաուլօ Միելիի (Paolo Mieli), վերջաբանը՝ Անթոնիա Արսլանի (Antonia Arslan), «Լիպերիլիպրի» (Liberilibri) հրատարակչութիւն, Հռոմ, 9 Ապրիլ 2025, 216 էջ (11,9 x 19,4 սմ.) (իտալերէն):

– Սահակեան Լուսինէ, Սարգսեան Անի, Պաղտասարեան Կորին Եպս. (աշխատասիրողներ), «Հայոց ցեղասպանութեան զոհ կանանց եւ երեխաների փրկութեան գործը «Տեղեկատու դիւան»ի վաւերագրերուն + Զաւէն պատրիարքի զեկոյցը Ազգերի լիկային», խմբագիրներ՝ Ռուբէն Մելքոնեան, Վահրամ Պետրոսեան եւ Վաչէ Բրուտեան, ֆրանսերէն վաւերագրերու թարգմանիչ՝ Ասիա Դարիպեան, «Լուսակն» հրատարակչութիւն, Երեւան, 2025 (1918-էն ետք Զաւէն արք. Տէր Եղիայեան պատրիարքի նախածեմութեամբ որբախնամ աշխատանքները): Ժողովածուն լոյս տեսած է համագործակցութեամբ Երուսաղէմի հայոց պատրիարքութեան եւ Երեւանի պետական համալսարանի Հայագիտական հետազօտութիւնների հիմնարկի:

– Սարգսեան Սուրէն, «Միհրան Տամատեան», խմբագիր՝ Ալպերթ Խառատեան, «Ամտարեւ» հրատարակչութիւն, Երեւան, 2025, 416 էջ: Հրատարակուած է Երեւանի «Գլաճոր» համալսարանի եւ Սեւծովեան-Կասպեան տարածաշրջանի քաղաքական եւ սոցիալական հետազօտութիւնների հիմնարկի գիտական խորհուրդներուն երաշխաւորութեամբ:



ՀՈՎԱՆԱԻՐՈՒԹԵԱՄԲ ՀԱԼԷՊԻ ԵՐԵՔ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԵՐՈՒՆ

կազմակերպությամբ
Ս.Դ.Հ.Կ.
**ՏԽՐՈՒՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ**

20 կախաղաններու նահատակութեան
110 ամեակի ոգեկոչում

Բանախօս՝
Ընկ. ՆԱԶԱՐԷԹ ԶԷՐԷՃԵԱՆ
Արարատ Օրաթերթի Տնօրէն

Կիրակի, 15 Յունիս 2025,
երեկոյեան ժամը 7:00-ին
Ս. Երրորդութեան Աղաճանեան սրահէն ներս:

ՄԱՀԱԶԴ


Տիկին Սեղա Ազատեան Տեմիրճեան
Տէր եւ տիկին Ռաֆֆի Պաշեան եւ թալին Տեմիրճեան
Տէր եւ տիկին Երուանդ Տեմիրճեան եւ Անի Շապագեան
եւ զաւակունք՝ Սարգիս, Անթոնի եւ Ալեքսանտր
Տէր եւ տիկին Ալեքս Տեմիրճեան եւ Անն Ապի Ֆարահ
եւ զաւակունք՝ Ալեքս եւ Անուշքա
Տէր եւ տիկին Սթեֆան Փեթրոսեան եւ Սապին Պաշեան
եւ զաւակունք՝ Նաթալիա եւ Անուշքա
Տէր եւ տիկին Գարլ Պաշեան եւ թալին Գնաճեան
եւ զաւակը՝ Ռաֆֆի
Տէր եւ տիկին Աւետիս Տեմիրճեան եւ Ռիթա Միսիրեան
եւ զաւակունք՝ Ալիսա, Աւետիս եւ ընտանիք
Նախկին նախարար տիար Յակոբ Տեմիրճեան
եւ զաւակունք՝ Ռաֆֆի, Մարք եւ ընտանիք
Տիկին Սեղա Տեմիրճեան Օղլեան
եւ զաւակունք՝ Նաթալի եւ ընտանիք, եւ Մանուէլ
Հանգուցեայ, Զապէլ Տեմիրճեան Գույումճեանի
զաւակներ՝ Կարօ, Յակոբ, Անի, Արլին եւ ընտանիք
Հանգուցեայ Շաքէ Տեմիրճեան Սեֆերեան
եւ համայն Տեմիրճեան, Ազատեան, Պաշեան, Շապագ-
եան, Ապի Ֆարահ, Փեթրոսեան, Գնաճեան, Միսիրեան,
Օղլեան, Գույումճեան, Սեֆերեան ընտանիքներ եւ ազգա-
կաններ սրտի դառն կակիծով կը գուժեն իրենց ամուսնոյն,
հօր, մեծհօր, աներհօր, եղբօր, հօրեղբօր, մօրեղբօր եւ
հարազատին

ՍԱՐԳԻՍ ԵՐՈՒԲԱՆԴ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ

(Ծնեալ՝ 1933)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 8 Յունիս 2025-ին:
Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ
Զորեքշաբթի, 11 Յունիս 2025-ին, առաւօտեան ժամը
11:00-ին, Անթիլիասի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր
տաճարին մէջ:
Ներկայս ընդունիլ իբրեւ մահազօ:
Ցաւակցութիւնները կ'ընդունուին Հինգշաբթի 12 Յունի-
սին, առաւօտեան ժամը 11:00-էն սկսեալ, մինչեւ երեկոյ-
եան ժամը 7:00, Հ.Բ.Ը.Ս. Տեմիրճեան կեդրոնին մէջ:

ԵՂԱՆԱԿԸ ԱՅՍՈՐ



Պէյրուք (արեւոտ)
Ցերեկը 27/24՝ գիշերը՝ 69% տամուկ

Երեւան (մասամբ ամպամած)
Ցերեկը 31/18՝ գիշերը՝ 23% տամուկ

Հալեպ (արեւոտ)
Ցերեկը 41/23՝ գիշերը՝ 19% տամուկ

Դամասկոս (արեւոտ)
Ցերեկը 36/19՝ գիշերը՝ 16% տամուկ

Տուպայ (արեւոտ)
Ցերեկը 39/31՝ գիշերը՝ 36% տամուկ

Լոս Անճելէս (արեւոտ)
Ցերեկը 26/17՝ գիշերը՝ 56% տամուկ

Սիտնի – վաղը (թեթեւ անձրեւ)
Ցերեկը 15/10՝ գիշերը՝ 70% տամուկ

Մոնթրէալ – վաղը (ամպոտ)
Ցերեկը 17/11՝ գիշերը՝ 74% տամուկ



ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԴՊՐԵՎԱՆՔԻ ԱՄԱՎԵՐՃԻ ՀԱՆՐԵՍ
ԵՒ
ՎԿԱՅԱԿԱՆԱՅ ԲԱՇԽՈՒՄ

95-րդ Ուսումնակրթական Տարեշրջանի

Տեղի կ'ունենայ Կիրակի, 15 Յունիս 2025,
երեկոյեան ժամը 7:00-ին,
Ս. Աստուածածին Վանքին մէջ, Պիքֆայա:

ՀՐԱՒԵՐ

110

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՀԱՅ ԱԶԳԻ ԱՆՄԱՀ
ՔՍԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ՌԱՀՎԻՐԱՆՆԵՐՈՒ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 110-ԱՄԵԱԿԻՆ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ՝
ԳԵՐՇ. ՏԵՐ. ՇԱՀԷ ԱՐԷ. ՓԱՆՈՍԵԱՆԻ
Բարեշան Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի,
22 Յունիս 2025-ի առաւօտեան ժամը 10:30-ին
Ռըմէլլի Ս.Յարութիւն եկեղեցւոյ մէջ:

ԵՈՒՆԻՖԻԼ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԵՅՈՒԱԾՔԻ ՓԱՓԿԵՅՈՒՄ

Շարունակուած էջ 1-էն

Նախագահը գնահատեց իր ֆրանսացի պաշտօնակից
Էմանուէլ Մաքրոնի թափած ջանքը՝ երաշխաւորելու համար
ԵՈՒՆԻՖԻԼ-ի խաղաղապահ ուժերու առաքելութեան երկա-
րածգումը:

ԳՈՐԾԱՊՈՒԼ-ԲՈՂՈՔԻ ՅԵՏԱԶԳՈՒՄ

Յամաքային փոխադրութեան ոլորտի աշխատակիցները
որոշեցին յետաձգել իրենց այսօր նախատեսուած գործադուլն
ու բողոքի արշաւը՝ վարչապետարանին մէջ շարք մը պաշտօ-
նատարներու ներկայութեամբ գումարուած ժողովէն ետք,
որուն ընթացքին քննարկուեցան լուծումի շարք մը առա-
ջարկներ: Աշխատանքի նախարար Սոհամմէտ Հայտար իր
կարգին հաստատեց, որ պետութիւնն ու ցամաքային փոխադ-
րութեան ոլորտին աշխատակիցները համաձայնութեան յան-
գած են՝ չեղարկելու որոշ տուրքեր, մինչ ելեւնուորքի
նախարարը կը մշակէ յատուկ ուսումնասիրութիւն մը՝ գոր-
ծադրութեան դնելու երթեւեկութեան մոր օրէնքը: Իսկ Աշխա-
տաւորական ընդհանուր համադաշնակցութեան նախագահ
Պըշարա Ասմար կառավարութեան կոչ ուղղեց ժողովուրդը մոր
տուրքերով խեղդելու փոխարէն տուրքեր սահմանելու ծովե-
զերեայ համրային սեփականութիւններու գործածութեան
համար եւ աշխուժացնելու մաքսային ծառայութիւններուն
աշխատանքը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակուած էջ 3-էն

Տպագրուած է Թեքեան մշակութային միութեան Ա.Ս.Ի. եւ
Գանատայի Կեդրոնական վարչութեան մեկենասութեամբ:
– Քատունի Երուանդ Հ., «Հարիւրամեայ ատենագրութիւնը՝
ուղեցոյց եւ առաջնորդ», հրատարակութեան պատրաստու-
թիւն՝ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական եկեղեցիներու
Միութեան Հրատարակչական գրասենեակի, տպարան Design
Kesdenian, Պէյրուք, 2024, 168 էջ (17 x 24 սմ.) (Հայ
աւետարանական եկեղեցիներու 5-10 Յուլիս 1922-ին Սթամ-
պուլի մէջ կայացած համաժողովին ատենագրութիւնը, ամոր
բովանդակութեան վերլուծութիւնը, առնչակից 8 յաւելումներ
ու այլ միւթեր, մեծաքանակ ծանօթագրութիւններ, անգլերէն եւ
արաբերէն ամփոփումներ, հեղինակին գիտական կենսագրու-
թիւնը եւ լոյս ընծայած կամ աշխատասիրած հրատարակ-
ութեանց ամբողջական ցանկը): Հեղինակը ժողովածուն
ծօնած է հայագիտութեան իր մենտորին՝ մեծ հօրը՝ վերա-
պատուելի փրոֆեսոր Եղիա Ս. Քատունիի (1894-1959) վա-
տակաշատ յիշատակին ծննդեան 150-ամեակին առիթով:
Հրատարակութեան պատրաստութեան եւ տպագրութեան
միջակայն պատասխանատուութիւնը սիրայօժար ստանձնած
է Ամերիկայի Հայ աւետարանչական ընկերակցութիւնը:
– Օտեան Երուանդ (Oadian Yervant), «Տասներու տարի
Պոլսէն դուրս, 1896-1908» (Twelve Years away from Constan-
tinople, 1896-1908), անգլերէնի թարգմանեց Նանոր
Գպրանեան, հրատարակիչ՝ «Կոմիտաս» հիմնարկ, Լոնտոն,
2025, xx + 274 էջ (նախաբան, թարգմանիչին կենսագրութիւնը)
(անգլերէն):



Կազմակերպութեամբ՝
Ս.Դ.Հ.Կ. Տիւրունի Ուս. Երիտ. Միութեան Վարչութեան

ՄՈՍԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Նուիրում՝

20

ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ

110-րդ ամեակին

Տեղի կ'ունենայ Կիրակի, 15 Յունիս 2025-ի երեկոյեան, ժամը
6-ին, Նոր Հաճնոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ շրջափակին մէջ:

@DekhrounISYA

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՈՐ

12 Յունիս 2025: Տարուան 163-րդ օրն է:
2025-ի աւարտին կը մնայ 202 օր:

Դէպքեր-տօներ
1991 - Պորիս Ելցինը ժողովրդական քուէարկութեամբ
դարձաւ Ռուսիոյ առաջին նախագահը: Ելցինի առաջ-
նորդութեամբ սկսաւ խորհրդային միութեան փլուզումը
եւ 1991-ի Դեկտեմբերին Ռուսաստանը յայտարարեց իր
անկախութիւնը:
1952 - Գահիրէի Ալ Ազհար համալսարանը, մահմե-
տական աշխարհի մեծ եւ ազդեցիկ աստուածաբանական
կեդրոնը, հրապարակեց Քուրանի մեկնաբանութիւնը,
արգիլելու կանանց իրաւունքները քուէարկելու եւ խոր-
հրդարան մուտք գործելու վերաբերեալ:
1867 - Աւստրո-Հունգարական կայսրութիւն: Այս հա-
մատեղ պետութիւնը ստեղծուեցաւ Աւստրիա կայսրու-
թեան եւ Հունգարիոյ Թագաւորութեան միաւորմամբ՝
նպատակ ունենալով լուծել երկու երկիրու միջեւ քաղա-
քական ու ազգային հակասութիւնները:
Պրագիլ – Սիրահարներու Օր, Պրագիլի մէջ սիրահար-
ներու օրը կը նշուի Յունիս 12-ին, Սուրբ Անթոնիոյի (Santo
Antnio) նախօրէին, որ կը ծանցնուի որպէս սիրոյ,
ամուսնութեան եւ զոյգերու սուրբը:
Փարակուէլ – խաղաղութեան Օր, 1870-ին Տրիփլէ
դաշինքի պատերազմը Պրագիլ, Արժանթին եւ Ուրուկուէլ
ընդդէմ Փարակուէլի, աւարտեցաւ հսկայական մարդկա-
յին կորուստներով եւ երկիրը քայքայող հետեւանքներով:
Խաղաղութեան Օրը կը նշէ այն պահը, երբ Փարակուէլը
վերադարձաւ խաղաղութեան եւ սկսաւ վերականգնել
ազգային ինքնութիւնը:
Ֆիլիպին - Անկախութեան Օր, 1898: երկար ժամանակ
Սպանիոյ գաղութ ըլլալէ ետք, Ֆիլիպինը յայտարարեց իր
անկախութիւնը Էմիլիօ Ակիմալտոյի ղեկավարութեամբ՝
Կալիթէ նահանգին մէջ:
Ֆինլանտա – Հելսինքիի Օր, կը նշուի քաղաքի
հիմնադրութեան օրը՝ 1550 թուականին, երբ Շուէտի
թագաւոր Կուսթա Վազան հիմնեց քաղաքը՝ իբրեւ
առեւտրական կեդրոն: Ժամանակի ընթացքին Հելսինքի
վերածուեցաւ Ֆինլանտայի մայրաքաղաքի:

Ծնունդներ
1881 - Մաքս Մաքսուտեան, ֆրանսահայ
դերասան:
1924 - Ճորճ Հերպըրթ Ուոքըր Պուշ,
Միացեալ Նահանգներու 41-րդ նախագահը
(1989–1993):
1930 - Սեպուի Լեւոնի Արգարեան, հայազգի երգա-
հան, երգիչ, խմբավար, ռատիօհաղորդավար, «ԳՈՂՐԱ»
սիմֆոնիկ նուագախումբի եւ երգչախումբի խմբավար,
գեղարուեստական ղեկավար:
1972 - Գոռ Վարդանեան (իրական
անունը՝ Արմէն), դերասան, բեմադրիչ, ար-
տադրիչ, Հայաստանի Թաքուանտօ քարա-
թի ֆետերասիոնի նախագահ:
1951 - Անդրանիկ Նահապետի Մար-
գարեան, հասարակական-քաղաքական
գործիչ, Հայաստանի վարչապետ (2000-2007), ՀՀԿ
նախագահ:
Մահեր
816 - Լեւոն Գ., եղած է Հռոմի պապ 795-էն մինչեւ 816
թուականները:
1990 - Մուշեղ Իշխան (Մուշեղ Սրապիոնի
ճենտերեճեան), բանաստեղծ, արձակագիր,
թատերագիր, գրաքննադատ, հրապարակա-
խօս ու մանկավարժ:
1993 - Մոնթէ Մելքոնեան (մարտական
անունը՝ Աւօ), (1957-1993), Հայաստանի
ազգային հերոս, Արցախի հերոս:
1913 - Ալեքսանտր Փաւլովիչ Զեխով, ռուս վիպասան,
հրապարակախօս, յուշագիր:



ՑԱԽԱԿՅՈՒԹԻՒՆ

Ողբացեալ **ՇԱՔԷ ՍԱՆՈՍԵԱՆԻ** մահուան տխուր առիթով,
Հ.Մ.Մ Պէյրուքի վարչութիւնն ու Սկառուական խորհուրդը
խորապէս կը վշտակցին ողբացեալի ընտանեկան պարա-
գաներուն, ի մասնաւորի՝ **տէր եւ տիկին ընկեր Սամօ եւ**
Թալին Սանոսեաններուն: